



46. ԼՈՒՍԻԿԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մե ԽԻՏԻԿ կար, անունը՝ Լուսիկ: Շատ անքամ ԽԻՏԻԿներն հաֆկվում ին Լուսիկենց տունը, թել մանում, խոսում, ծծողում: Դե, ջահել են, հո՛ւր էլթան:

Մե անքամ էլ թելը մանելու ժամանակ թելը կղրվավ, թեչին հընգավ ցած: Մեկ ասավ՝ վա՛յ գլոխս: Հիշկացին տեսան, որ մարթ չըկար: Ախճիկները վախեցան, ամենքը մե յան փախան: Տանը մնաց մինակ Լուսիկը, հիրանց տնից հո՛ւր էլթա: Էլավ բալթեն բերեց, բռնեց ձեռը, կայնավ:

Հիշկում էր դռանն ու ակուշկին: Մեկ էլ տեսավ՝ ակուշկից մեկը գլոխը կոխեց ներս: Լուսիկը բալթեն բերեց, հիչցուց գլխին, դե վախեցուկ ԽԻՏԿ ուժ, մեկ էլ լաց՝ վա՛յ գլոխս, հինքն ուշաթափվավ, էլ ձեն չըլսաց: Էտ ժամանակ ակուշկի էն յանը՝ Փայտոնի մոտ, կայնուկ ին իրեք մարթ: Ոտներից քաշին քցին Փայտոնը էտ գլոխը ճղած մարթին, տարան:

Տնացիքը էկան տեսան Լուսիկը գետնին փռվուկ: Ջուր լցին վրեն, ուշկի բերին, ակուշկի արունը սրփին, Լուսիկը կամանց-կամանց լավացավ: Չնայած Լուսիկը լավացավ, հըմա ԽԻՐ սրտի մեչն էր:

—Անպատճառ մե օր կրգան հիրանց վրեժն առնելու, ԽԻՏԻԿներ՛ր, ես վախենում եմ,—ասում էր Լուսիկը:

Խընգը տարի ետո Լուսիկը հելավ եքա ԽԻՏԻԿ, էկան նշանին, մե չափաթ ետո էլ էկան տանելու:

Խառնիս արին, Լուսիկին տարան:

Կիսուրը Լուսիկի հնոնչը շոովա դրեց: Լուսիկը հիշկաց շոովին, տեսավ մեչը մե խատ եղունք: Էլի հիշկաց, տեսավ մարթի անգած: Սիրտը դող հընգավ, հըմա նշանց չըտվեց:

Կիսուրը տեսավ, որ խառսը խաց չի ուտում, ասավ.—Լուսի՛կ, բալա՛ ջան, խա՛ց կեր, լավ շոովա յա:

—Չէ՛, մայրի՛կ ջան, չեմ ուտում, իչտո՛հ չունեմ, խիվանդ եմ, հերեկ էլ չեմ քնե, պաղորաստութուն ինք տենում, գլոխս շատ ցավում ա, մե տեղ հըլներ մեշու պարկի, լավ կըհըլներ:

Կիսուրը Լուսիկին տարավ մարթի սենյակը, պարկավ, հրճա քունը չի տանում, մտածում ա, թե էս մարթակերների մըչից ոնց փախնի ազատովի: Մարթը ներս մտավ: Գլոխը բաց էր, էկավ պարկավ Լուսիկի կողը, հետեն արավ Լուսիկին: Լուսիկը սուտ քուն էր տվել, հիշկաց տեսավ, որ գլխին իսպա կա, տեսավ, ի՞նչ, հիրա թեչու ու բալթի տեղերը: Հավելի դողաց. «Ուրեմն ըստոնք բերեր են, որ ընձի սպանեն, միսս ուտեն, հիրանց վրեժն էլ լուծեն»,—մտածեց Լուսիկը:

Մեչու պարկելուց ետո հելավ, մորն ասավ, որ ճաչ բերա, մերը բերեց:

—էլի խին մսից ա, թագա միս չըկա՞:

—Ձէ՛, տղա՛ ջան, թագա միսը հէքուց կըհըլնի, լավ էրնջի թագա միս, գիշերը կըմորթենք, հառավոտը կէփեմ, կուտես, կէթաս գործիտ, հիմի ըտրանով յոլա գնա:

Լուսիկը չէր քնե, բոլորը լաց: Էրինջը հինքն ա, գիշերը կըմորթեն, հառավոտը կէփեն:

—էս հո՞ւր հընգա, Տե՛ր Աստված, ես քեզի ի՞նչ ի արե, որ պըստկուց քցեր ես ախ ու սարսափի մեչ, բերեր ես մարթակերների տունը, մարթի միս են դրե հառեչս,—մտածում էր Լուսիկը ու սրսփում:

Մեկ էլ լսաց մարթի խոսկերը.—Մայրի՛կ, Լուսիկին էս ճաչից ուտեցրի՞ր, ի՞նչ ասավ, որ կերավ, չասա՞վ՛ խամով ա:

—Ձէ՛, ճաչը չըկերավ, ասավ հերեկ սաղ գիշերը պաղըրաստութուն են տեսե, չի քնե, հիմի գլոխը ցավում ա, ըտու խըմար գնաց քնավ:

—Ուամով էրինջ ա, չէ՞, մայրի՛կ:

—Ուամովը խամով կըհըլնի, հրճա քո գլխին բալթով տվող մատներից էնենց խաչ անեմ, որ ուտելով չըկչտանաս, խամը բերանտ մնա,—ասավ մերը:

Լուսիկը վախից դողում ա: Ի՞նչ անա, փախնի՛ կըբռնեն, ժամանակը քիչ ա, մե բան բղի մտածել, թե չէ ազատում չըկա:

Եփ մարթը խաց կերավ, մերն ասավ.—Հելի քնի՛, գիշերվա կեսին յա լուսուղեմ գործտ կանես, որ միսը տաք-տաք վերցենք ու քցենք դազանը:

Մարթը էկավ, թուրը կախեց, տեսավ՝ Լուսիկը քնուկ ա, հինքը պարկավ կողին, մտածեց հէքուցվա անելիքի մասին: Պարկավ ու մե քանի բոպե ետո խոռը քնավ, սկսեց խոխոալ: Հիշկաց թրին, հելավ, թուրը վերցուց քաչեց, տեսավ՝ արնոտ ա. «Տենաս՝ որ անբախտն ա հընգե ձեռը»,—մտածեց Լուսիկը: Մտկի մեչն ասավ. «Հե՛յ, թո՛ւր, ինչքան անմեղ արուն ես թափե, էս մե անքամ էլ մեղավոր արուն թափա՛»: Աստված կանչեց ու թուրը բերեց, դուզը

մարթի վզին: Գլոխը կզրեց: Մարթի շորերը խաքավ, ձին քաշեց դուս, թուրը կապեց, խեճավ ու քշեց:

Հուր ա էթում, հինքն էլ չի հիմանում: Քշում ա ու քշում, որ հետևից խասնող չըհըլնի: Թո էսի էթա:

Մարթակերի մերը տեսավ, որ լուսը բացվում ա, հըլա տղեն քնուկ ա, Լուսիկի մորթելու ժամանակն հընցնում ա, հինքը ճաշ բղի էփա: Տղի գլոխը Լուսիկը դրեր էր տեղը, յորդանով ծասկե:

Մերն էկավ տղին բրթեց, որ վեր կենա, խետն էլ ասավ.—Ձահեկ սիրուն ախճիկ ես բերը, էրևում ա խետը շատ ես խաղացե, հուշ ես քնե, հելի՛ վեր, բոլ ա քնես, գործից հուշնում ես:

Գնաց: Սպասեց մե քանի հրուպե, տղեն չի հըլնում:

—Շան տղեն չըհըլնի՞՞ միտքը փոխեր ա, չի ուզում մորթա,—ասավ ծառային,—ես հիմի նշանց կըտամ, մե գիշեր խետը քնելու խըմար ուզում ա, որ թողի հիրան արունը թափողի վրեն լո՞ւս բացվի:

Ձղայնացած ու կատաղած էկավ:

—Բոլ ա մուխես, հելի՛, էլ ախճիկ չե՞ս տեսե, էս մեկն ա՞:

Տեսավ՝ ձեն չըկա: Յորդանը վերցուց, ի՞նչ տենա, որ լավ հըլնի: Տղեն մորթուկ, ախճիկը չըկա: Վայ արավ, թողեց չոքերը, տփեց գլոխը: Ծառան էկավ տեսավ, ձեն ձենի տվին, գոացին:

Էլի դառնանք Լուսիկի յանը, տենանք՝ ինչ հելավ: Մարթակերների տանից դուս գալուց ետո Լուսիկը հիրանց տան յանը չըգնաց: Հընչի՞: Առաչինը, որ մարթակերները կէթան հիրանց տունը, հիմանան՝ տուն էկեր ա, թե չէ: Հինքը մեկի ա սպանե, էլի կան: Ոստնիսին շատ մարթ կար, կարող ա բոլորը մարթակերներ են: Մեկ էլ մտածում էր. «Հո՞ւր էթամ, խորթ մերս իմ մասին մտածող չի, էլի կըտա մարթակերների ձեռը: Լավն էն ա, գլոխ-արև վերցեմ էթամ, ինչ ուզում ա հըլնի»: Զինը տակը, թուրը վրեն, որ մարթակերին սպանեց, չվախեցավ, էլ վիրնի՞ց վախենա:

Գնաց, գնաց, տեսավ՝ հառեչը քաղաք ա: Բանցրցավ սարի գլոխը, հիշկաց, տեսավ՝ մեծ քաղաք ա: Մտածեց, որ էտ ձիով որ էթա քաղաքը, ձինն էլ, շորերն էլ ճանչնող կըհըլնի, հարգավոր ա ձին բաց թողել, հուր էթում ա, էթա, շորերն էլ փոխել: Զեռը տարավ պենջակի ջեբը, տեսավ՝ լինքը փող ա, ձեռը տարավ շալվարի ջեբը, տեսավ էրկու քիսիկ ոսկի:

Գնաց մտավ էտ քաղաքը, հառաչին պատահած դուքնից հիրա չափով կաստում, բլուզ, ոտնաման առավ մտավ մե պառվի տուն, շորերը փոխեց, հիրա վրավի մարթակերի շորերը քցեց կրակը:

Պառավն էկավ որ կրակից խանա, չըթողեց, ասավ.—Մայրի՛կ, իմ շորերը թո հուրիչ մարթ չըխաքնի:

Վախենում էր, գուցե, շորերը ճանչնան ու սկսեն ման գալ, քթնեն, հընգերները կրսպանեն: Հո՞ւր էթա: Հարգավոր ա էնենց տեղ էթա, որ հիրանը քթնող չըհըլնի: Էտ տեսակ տեղ թաքավորի բաղն ա. «էթամ տենամ, բաղվանչու տեղ չըկա»: Գնաց, խառցրեց, ասին, որ բաղվանչուն օքնական ա պետք: Ըստրան բռնեցին բաղվանչու ձեռին աշխատող: Բաղի մեչն էլ մե տեղ տվին, որ արբի: Հիրա վիճակից դժգոհ չէր: Մարթակերի փողից շատ փող էր մնացե, էս տեղից էլ ոտճիկ էր ստանում: Լավ էր, գործն էլ քիչ: Հիրա պարտականութունն էր ուշադրութուն դարցնա, որ գողութուն, բան չըլնի: Պահակի նման բան էր: Պահակները դռան մոտ ին կայնում, դսի յանից պատերի տակ, հըմա հինքը բաղի մեչն էր, ծառների խովին:

Մե օր շատ շոք էր: Բաղվանչին հուրիչ տեղ գնաց ու ասավ, որ գգուչ մնա, հինքը հիրկուն կըգա: Շոքը որ գոռեց, էս ախճիկը շորերը խանեց մտավ հավուզը, լողացավ, գլխարկը խանեց, մագերը վրաց, սանդրեց, դուս էկավ: Մե ժամից հավել լողացել էր:

Դու մի ասա, էս ախճկա լողանալու ժամանակ թաքավորի տղեն մտեր էր բաղը, ծառի հետեից թամաշա էր անում էս ախճկա լողանալուն: Տեսավ, որ շորերը խաքավ, դարցավ մե ջահել տղա: «Լավ էր», — մտածեց թաքավորի տղեն, էլ ախճկա աչկին չէրևաց, գոխտուկ գնաց, բաղից դուս էկավ: Գնաց պալատը, մտածում ա՛ ի՞նչ անա: «Թե հայդնեմ, որ տեսեր եմ՝ հինքն ախճիկ ա, ըտըրանից ի՞նչ օքուդ, լավ չի՞ հըլնի, որ վերցում ընձի թիկնապահ, սաղ օրը հիրար խետ կըհըլնենք, էն ժամանակ էլ մե բան կըմտածեմ: Թե՞ էթամ խորս ու մորս ասեմ, որ մեր բաղվանչու օքնական ախճիկ ա, ուզեք ընձի»: Էլի շատ պլաններ քաչեց, հըմա վերչնական որոշում չըխանեց: Հիրկունը պարկավ քնելու, քունը չէր տանում: Սաղ քչերը շուռ էկավ էս կողին, էն կողին, լուսուղեմ աչկը մեշու կպցուց: Հառավոտը գարթնավ, էկավ բաղը:

Բաղվանչին գլոխ տվեց, ասավ. — Թաքավորի՛ տղա, ամեն բան կարքին-սարքին ա:

— Բա էս տղեն ո՞վ ա, բաղվանչի՛ ուստա, — խառցրեց թաքավորի տղեն՝ նշանց տալով երիտասարթին:

— Մուրա՞ղը, իմ օքնականն ա, թաքավորի՛ տղա, մե ամիս ա ըստեղ ա, լավ աչայնի, դոչաղ տղա յա: Շատ էլ խելոք ա, շատ չի խոսում, հըմա շատ ա կարթում, մոտը մե քանի պատմության գիրք կա: «Պղնձե քաղաքի պատմութունը» կարթաց, ինչ լավ պատմութուն ա:

— Անունդ Մուրա՞ղ ա:

— Հրամանքտ, թաքավորի՛ տղա:

—Ռոճիկտ ամսական իչքան ա, Մուրա'դ:

—Ամիսը հարիր մանեթ ա, թաքավորի' տղա:

—Ըսկ ոռճիկ ստացե՞ր ես:

—Ո՛սա', մե անքամ ստացեր եմ, թաքավորի' տղա:

—Ձե՞ս ծախսել:

—Ըստեղ համարյա թե ծախս չըկա, թաքավորի' տղա, խացն ու մնացած ուտելիքը պալատից հղրկում են, միրքն է, դու տենում ես, որ լինքն ա, բաղից էլ դուս չեմ գալում:

—Քու աշխատանքից գո՞հ ես:

—Գոհ չըլինեմ, ի՞նչ անեմ, թաքավորի' տղա, շատ գոհ եմ:

—Ձէ', Մուրա'դ, ո՞նց գոհ մնալ, ճիշտ ա, բաղի մեչ ես, բայց բանտարկյալի նման ես, դուս չես գալում: Արի քեզի դարցնեմ ընձի թիկնապահ, խետս ազատ ման կըզաս, ուզածտ տեղը կէթաս, ուզես մեկ էլ... —կայնավ, ասա՞, թե՞ չասա:

—Մեկ էլ ի՞նչ, թաքավորի' տղա:

—Մեկ էլ ուզածտ ջահել ախճկա խետ ման կըզաս:

—Ես հըլա 16-17 տարեկան եմ, թաքավորի' տղա, ախճիկն ինչի՞ս ա պետք, հըլա պստիկ եմ:

—Մնողներ ունե՞ս, Մուրա'դ:

—Ձունեմ, թաքավորի' տղա, մեռեր են:

—Ի՞նչ ես ասում, չե՞ս ուզում դառնա ընձի թիկնապահ:

—Քո կամքն ա, թաքավորի' տղա, հըմա բաղի մեչ էլ վատ չի, ազատ ման եմ գալում, դսի պահակներին եմ ստուգում, էտ ա իմ գործը:

—Օրտ ուրախ չի անցնի, որ թիկնապահ դառնաս, քեֆերի կըմասնակցես, աշխարք կըտենաս:

—Քո կամքն ա, թաքավորի' տղա:

Թաքավորի տղեն գնաց: Լուսիկը մտքի մեչ հընգավ: «Վայ թե հիմանան՝ ախճիկ եմ, լավ չի հըլնի, ամոթ ա, չէթամ էլ՝ չի հըլնի, թաքավորի տղին ո՞նց դեմ գնամ: Մեկ էլ՝ թաքավորի տղեն իչքան լավն ա, ամեն օր կըտենամ: Ճիշտ ա, թաքավորի տղի լայեղին չեմ, հըմա ամեն օր կըտենամ, դուրս էկավ»:

Էս տեսակ բաների մասին էր մտածում, մյուս օրը էկան կանչին թաքավորի տղի մոտ:

Թաքավորի տղեն ասավ. —Մուրա'դ, էս իմ սենյակն ա, էս սենյակն էլ կըտամ քեզի, թիկնապահ ես ունեմ, եփ թու ցանգանաս իմ խետ գալ, ես թիկնապահին չեմ տանի, ես ու դու կէթանք: Մե խոսքով, ամեն բան քո ցանգութունով, քո հոժարութունով կանենք: Ի՞նչ ես ասում, համաձայն ես, թե՞ չէ:

—Համաձայն եմ, թաքավորի' տղա:

—Դե որ համաձայն ես, մա'ց, գնա պարկի' հանգստացի', սաղ օրը արևի տակ վառվեր ես:

Լուսիկն իրավունք առավ, գնաց բաղը, էստեղ էր թողել, մե քանի մանդր-մունդր բան, վերցուց, բաղվանչուց էլ չնորակալ հե-լավ գնաց:

Թաքավորի տղեն Մուրադին խոսացնում էր, աման էր լվալ տալում, ճաչ էր էփել տալում ու աչկի տակով հիչկում էր Մուրադի բոլոր շարժուձևերին, որ հաստատ համոզվի, որ Մուրադն ախճիկ ա: Թաքավորի տղեն համոզվել էր, որ Մուրադն ախճիկ ա, հրմա էլի էր ստուգում:

Մե անքամ ըստոնց հառեչով մե մարալ հրնցավ:

Թաքավորի տղեն Մուրադին ասավ.—Մուրա'դ, քո նետն ու աղեղը պաղրաստ ա, սպանա' Մարալին:

—Ձէ', թաքավորի' տղա, չեմ սպանի, մեխկ ա, ձաք կունենա, մեկ էլ էտքան գեղեցիկ մարալի վրա ո'նց ձեռք կրգնա, որ մարթ մե շիչ խորովածի խըմար սպանա, էտի անխըխճութուն ա: Մար-թիք շատ անխիխճ են, թաքավորի' տղա:

Հենց էտ հրոպեին էրկու գել հընգան մարալի հետևից: Մու-րադն էլ՝ ըստոնց հետևից: Էրկու գելին էլ սպանեց, ետ էկավ ու-րախ ու խպարտ:

—Գելերը ձաք չունի'ն, Մուրա'դ, խառցրի'ր:

—Ըտոնց ձաքերին էլ ա պետք է սպանել, ըտոնք գազան են: Ըստոնք են, որ մարալների օրը սևացրել են, ըտոնք մարթակերից էլ վատ են:

—Ի'նչ մարթակեր, Մուրա'դ:

—Մարթակերներ էլ կան, թաքավորի' տղա:

—Բա ո'ւր են, որ ես չեմ տեսե:

—Մե օր կըտենաս, թաքավորի' տղա, քո երգրում էլ կա:

—Մեր երգրում մարթակե'ր, ի'նչ ես ասում:

—Կա', թաքավորի' տղա, կա', ես տեսել եմ:

—Մուրա'դ, մարթակերների տեղը չե'ս ասի:

—Կասեմ, թո ժամանակը գա:

—Մուրա'դ, հիմի քեզի մե հուրիչ բան խառցում: Դու ընձի սի-րո'ւմ ես, թե' չէ:

Մուրադը մե քիչ կարմրավ, ետո ասավ.—Թաքավորի' տղա, որ դու ընձի վատահել ես քեզի թիկնապահ, նշանակում ա պտի սիրեմ ու պաշտպանեմ:

—Հիմի էլ մե հուրիչ հարց, Մուրա'դ, անունտ ի'նչ ա:

Մուրադը կայնավ, հիշկաց թաքավորի տղի աչկերին, սկսեց կամանց-կամանց դողալ: Թաքավորի տղեն տեսավ, որ Մուրադը

դողում ա, սիրտը թռթռում ա: էտ ժամանակ Հիրանք նստուկ ին ծառի տակը, թաքավորի տղեն մոտցավ, գրկեց, սկսեց պաչել: Մուրազը դողում ա, չի կանում խոսա, չի կանում հըլնի վեր, մացեր ա նստուկ, ետո էլ թուլցավ, հընգավ: Թաքավորի տղեն ասավ, որ հինքը նկատեր ա, որ Մուրազն ախճիկ ա, շատ դուրն էկավ, ըտու խըմար էլ արավ թիկնապահ:

—Դե անունտ ասա՛, ի՛մ սիրելի Մուրազ:

—Լու...սիկ:

—Իմ լուսատու արև, Լուսի՛կ, հէսօրվանից դու իմն ես, ես՝ քոնը: Քեզանից բացի՝ ես ոչ մեկի չեմ ուզի: Հիմի Լուսիկն էլ փաթթվավ թաքավորի տղին, մացին պարկուկ ու քնան: Ջարթնան հիրկվա յան: Լուսիկն ամանչում ա՝ թաքավորի տղի հերեսին չի կանում հիչկա:

Որոչեցին Հիրար սիրելու գաղտնիքը մե ժամանակ պախել, Մուրազն էլի Մուրազ կըմնա: Ըտուց ետո թաքավորի տղեն Մուրազի խետ ամեն օր յա մեչեն էր էթում, յա մե էնենց տեղ, որ Հիրանքը տնող չըհըլնի, յա նստում ին նարդու ու շախմատ խաղում:

Մեկէլ թիկնապահը նախանձում էր, որ թաքավորի տղեն սաղ օրը Մուրազի խետ ա հըլնում:

Մե օր ասավ.—Թաքավորի՛ տղա, մենք էսքան տարի Հիրար խետ ենք հելե, հըմա Մուրազին հավելի ես սիրում, հերեկվան էկած մե մատ լակոտ ա, դու ո՞նց ես ըտրան էտքան փայփայում, նստում խետը սաղ օրը խաղում, ընձի էլ մարթատեղ չես դնում:

—էսօրվանից ազատ ես, գնա վարձտ ստացի՛:

Թիկնապահը ձեն չարավ, գնաց:

Մե օր թաքավորի տղեն ասավ.—Մուրա՛ղ, իմ պատմութունն էն ա, որ թաքավորի տղա եմ, քեֆիս ման եմ գալում, իչքան ուզում եմ, ծախսում եմ, դու քո պատմութունն արա՛, ես հիմանամ:

Լուսիկը պատմեց ոնց որ կար, մինչև թաքավորի տղի թիկնապահ դառնալը:

—Հիմի էտ մարթակերները կա՞ն, Մուրա՛ղ:

—Կան, տեղներն էլ գիղամ, թաքավորի՛ տղա:

—Ես հիմի քեզի Լուսիկ եմ ասում, դու էլ իմ անունը տուր:

—Դու թաքավորի տղա ես, ես՝ քո ծառան, ո՞նց անունտ տամ:

—Մե անքամ Սավուղ ասա՛, էլի:

—Ես մե անքամ սխալվա, իրավունք տվի, որ պաչես, հիմի էլ ուզում ես դենը գնալ, չէ՛, թաքավորի՛ տղա, ամեն բանի խըմար կարք ու կանոն կա, ժամանակ կա:

—Չե՞ս հավատում, Լուսի՛կ, որ ես ու դու կամուսնանանք:

—Հավատում եմ, հըմա մինչև ամուսնանալը պտի օտար մնանք,

Հաշվի՛ առ, որ դու թաքավորի տղա ես, ես մե որի ու անտեր ախ-
ճիկ եմ:

Թաքավորի տղեն ձեն չարավ: Ետո խոսքը փոխեց:

—Մուրա՛ղ, ոնց անենք, որ էտ մարթակերներին գտնենք ոչնչաց-
նենք, փաստ կա՞, որ մարթակեր են:

—Փաստ շատ կա: Ամեն օր լուսը բացվելու ժամանակ մեկի
սպանում են, թարմ մսով ճաշ պաղրաստում:

—Հավատարու բան չես ասում:

—Իմ տեսածն եմ ասում, ուզում ես՝ մի՛ հավատա:

Թաքավորի տղեն խորը պատմեց, ինչ որ լսել էր իրա թիկնա-
պահ Մուրաղից: Թաքավորն ասավ, որ հինքն էլ ա լսացե ըտոնց
մասին, հըմա չեն կանում քթնեն:

—Մուրաղը տեղը գիդի, հայրի՛կ:

—Ձորք վերցրու գնա՛, զգո՛ւչ մաց, հառեչ դու չըմտնես ըտոնց
որչը:

Թաքավորի տղեն վերցրեց 300 հոքի, հինքն ու Մուրաղը հըն-
գան հառեչ, գացին: Լուսուղեմ տունը շրջապատին, որ լուսը բաց-
վավ, սկսին հարցակումը: Քսան մարթակեր սպանեցին, բռնեցին
ըտոնց մորը:

Մտան պաղվալները, մառանները: Հմեն տեղ արուն, մարթի
օսկոր, նոր մորթուկ իրեք ախճիկ:

Քանդեցին ավիրեցին էտ տունը ու ժողովրթին էլ զգուչացրին,
որ եթե էլի նկատվեն ըտոնց հընգերներից, հիմաց տան թաքավո-
րին:

էս կնգան բերին թաքավորի մոտը: Կնիկը զարմանում էր, թե
ո՞նց գթան հիրանց տեղը:

—Թաքավո՛ր, էսի քո հունարը չէր, գլխա կղրա, բան չունեմ
ասելու, մինակ թե ասա՛, ո՞նց գթաք մեր տեղը, ես մեկի վրա եմ
կասկածում, որ մատնած հըլնի:

—Ո՞ւմ վրա ես կասկածում:

—Մե ախճկա վրա:

—Ախճիկ չի, մե քաջ տղա յա:

—Բերեք տենամ, նոր մեռնեմ:

Մուրաղին բերին:

—էսի՞ յա տղա, չէ՛, թաքավո՛ր, տղա չի, էսի ախճիկ ա, իմ
տղին սպանողը:

Տեղից վեր թռավ, որ մատներով խելստա թիկնապահին, թա-
քավորի տղի թուրը հիչավ թևերին: Պառավի թևերը կղրվան:

—Դու քո արածն արիր, Լուսի՛կ, —ասավ պառավը ու հընգավ
գետին:

Պառավի դիակը քցին մե խորի մեջ: Թաքավորը կանչեց Մու-
րադին ու տղին, հիմացավ Մուրադի պատմութունը: Ըստե թաքա-
վորի տղեն խորն ասավ, որ հինքը սիրում ա Լուսիկին, Լուսիկն էլ՝
հիրանը: Բերին ըստոնցը պսակին, օխտ օր, օխտը գիշեր խառնիս
արին, ես էլ գացի, կերանք, խմանք, ըտոնցը խասցրինք հիրանց
մուրազին, դուք էլ խասսեք ձեր մուրազին:

